Փաստաբանին սպառնացել են Երևանի նոր ոստիկանապետի դեմ ֆեյսբուքյան էջի պատճառով

04.05.2013 13:37

«Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպության իրավաբան, փաստաբան Մերի Խաչատրյանը Facebook-ի միջոցով սպառնալիք է ստացել իրեն անհայտ անձից, ինչի մասին գրավոր տեղեկացրել է ՀՀ ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանին:

«Սույն թվականի մայիսի 2-ի առավոտյան (ժամը 10-11-ի սահմաններում) այցելում եմ սոցիալական ցանց և հերթական անգամ ստուգում իմ հաղորդագրությունները:

Ինձ ուղղարկված հաղորդագրությունների (Messages) ուրիշ (Other) բաժնում հայտնաբերում եմ ինձ լրիվ անծանոթ, ոմն Պարգև Կարապետյան (Pargev Karapetyan) անունով օգտատիրոջ սպառնացող և վիրավորող արտահայտություններով մի հաղորդագրություն (կից ներկայացվում են լուսանկարի ու հաղորդագրության պատճենները)», – գրել է Մերի Խաչատրյանը:

Ըստ փաստաբանի՝ այդ հաղորդագրությունը մենախոսություն է, բովանդակությունից ակնհայտ երևում է, որ սպառնալիքն ուղղված է անմիջապես իրեն որպես admin-ի, ս.թ. ապրիլին «Մենք դատապարտում ենք Երևան քաղաքի վարչության նոր պետի (Երևանի ոստիկանապետ) Աշոտ Կարապետյանի նշանակումը» ֆեյսբուքյան խումբ բացելու համար:

«Ես այդ հաղորդագրությանը չեմ պատասխանել, պատճենահանել եմ և անմիջապես տեղադրել վերը նշված խմբում և իմ անձնական էջում՝ ի գիտություն իմ ընկերներին ու հանրությանը, որ սպառնալիք եմ ստացել ոմն մի կեղծ (ընդունված է ասել՝ ֆեյք) օգտատիրոջից, ով իր էջը բացել էր ընդամենը ս. թ.ապրիլի 11-ին: Ի դեպ, ես նրան արդեն ուղարկել եմ Report, որպեսզի նրանից այլևս հաղորդագրություններ չստանամ, սակայն նշյալ խմբի մյուս ադմին՝ Լիլիթ Գևորգյանը, հիշել է նրա profile-ը:

Աղբյուրը՝ http://blog.mediamall.am/?type=society&id=9643

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })